ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2010 թվականի հոկտեմբերի 27-ին

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(վերնագիրը լրաց. 01.12.14 ՀՕ-206-Ն)

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վարձու աշխատողների և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստի հասկացությունը, ժամանակավոր անաշխատունակության նպաստի տեսակները, վարձու աշխատողների և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման պայմաններն ու կարգը:
2. Սույն օրենքի դրույթները չեն տարածվում զինծառայողների, փրկարարական ծառայողների, քրեակատարողական ծառայողների և դատական ակտերի հարկադիր կատարողների վրա: Սույն մասում նշված անձանց ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում նրանց վարձատրությունը պահպանվում է:
3. Չաշխատող (վարձու աշխատող և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ չհանդիսացող) անձին մայրության նպաստի տրամադրման, նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
(1-ին հոդվածը լրաց. 20.06.13 ՀՕ-95-Ն, խմբ., փոփ., լրաց. 01.12.14 ՀՕ-206-Ն, խմբ. 09.07.20 ՀՕ-361-Ն)
(09.07.20 ՀՕ-361-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 2. Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին օրենսդրությունը
(վերնագիրը փոփ. 01.12.14 ՀՕ-206-Ն)

1. Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներին առնչվող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով, այլ օրենքներով և այլ իրավական ակտերով:
2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:
(2-րդ հոդվածը փոփ. 20.06.13 ՀՕ-95-Ն, 01.12.14 ՀՕ-206-Ն, 21.12.17 ՀՕ-290-Ն)

Հոդված 3. Ժամանակավոր անաշխատունակության նպաստի հասկացությունը և տեսակները, մայրության նպաստի հասկացությունը
(վերնագիրը լրաց. 01.12.14 ՀՕ-206-Ն)

1. Ժամանակավոր անաշխատունակության նպաստի միջոցով մասնակիորեն փոխհատուցվում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված անձանց ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ:
2. Սույն օրենքով սահմանվում են ժամանակավոր անաշխատունակության նպաստի հետևյալ տեսակները.
1) հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստ (այսուհետ՝ հիվանդության նպաստ).

2) պրոթեզավորման պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստ (այսուհետ՝ պրոթեզավորման նպաստ).

3) առողջարանային բուժման անհրաժեշտության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստ (այսուհետ՝ առողջարանային բուժման նպաստ).

4) ***(կետն ուժը կորցրել է 01.12.14 ՀՕ-206-Ն)***

5) ընտանիքի անդամի հիվանդության (վնասվածքի) պատճառով առաջացած խնամքի անհրաժեշտությամբ պայմանավորված ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրվող նպաստ (այսուհետ՝ ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ):

3. Մայրության նպաստի միջոցով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի (արձակուրդի իրավունք ունենալու) ժամանակահատվածում մասնակիորեն կամ ամբողջությամբ փոխհատուցվում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված անձանց հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ:

(3-րդ հոդվածը լրաց., փոփ. 01.12.14 ՀՕ-206-Ն)

Գ Լ ՈՒ Խ 2

ՆՊԱՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Հոդված 4. Նպաստի իրավունք ունեցող անձինք

1. Սույն օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստի (այսուհետ՝ նպաստ) իրավունք ունեն՝

1) գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք.

2) անհատ ձեռնարկատերերը և նոտարները (այսուհետ՝ ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձինք), բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

2. Անձը սույն օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստի իրավունք ունի սույն օրենքով սահմանված պայմանների բավարարման և օրենքով սահմանված կարգով ու չափով եկամտային հարկ (շահութահարկ) վճարած լինելու դեպքում, բացառությամբ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին՝ ժամանակավոր անաշխատունակությունը սույն հոդվածի 3.1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված ժամակահատվածներում առաջանալու հիմքով սույն հոդվածի 3.2-րդ մասի համաձայն մայրության նպաստ նշանակելու դեպքերի, երբ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին մայրության նպաստ տրվում է անկախ շահութահարկ վճարած լինելու հանգամանքից:

3. Սույն օրենքով սահմանված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստները տրվում են, եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ նոտարի պաշտոնավարման ժամանակահատվածում:

3.1. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին սույն օրենքով սահմանված ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի տրվում, եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է՝

1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ գործունեությունը դադարեցնելու ժամանակահատվածում (գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն ներկայացնելու օրվանից մինչև այդ հայտարարության կամ գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածում).

2) բացառապես միկրոձեռնարկատիրության ~~(մինչև 2020 թվականի հունվարի 1-ը՝ ընտանեկան ձեռնարկատիրության)~~ սուբյեկտ համարվելու ժամանակահատվածում.

3) «Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ~~(մինչև 2020 թվականի հունվարի 1-ը՝ նաև «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով)~~ սահմանված հարկային արտոնություններից օգտվելու ժամանակահատվածում:

3.2. Սույն օրենքով սահմանված մայրության նպաստ է տրվում նաև ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին, եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է սույն հոդվածի 3.1-ին մասում նշված ժամանակահատվածում:

4. Նպաստը տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված ժամանակավոր անաշխատունակության, իսկ մայրության նպաստը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով

սահմանված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի՝ սույն օրենքով սահմանված օրերի համար, բայց ոչ ավելի, քան մինչև օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիրը լուծելը (աշխատանքից ազատվելը՝ անկախ աշխատանքային պայմանագրի տեսակից)~~ կամ որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտը (անկախ լուծվելու հանգամանքից)~~, կամ օրենքով սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեության դադարեցումը (բացառությամբ սույն հոդվածի 3.2-րդ մասում նշված դեպքի) կամ նոտարի պաշտոնավարման ավարտը (գործունեության դադարեցումը): Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին (բացառությամբ սույն հոդվածի 3.2-րդ մասում նշված դեպքի) մայրության նպաստը տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում գործունեությունը անորոշ կամ որոշակի ժամկետով դադարեցնելու դեպքում՝ գործունեությունը անորոշ կամ որոշակի ժամկետով դադարեցնելու օրվանից:

5. Եթե անձը նույն ժամանակահատվածի համար ձեռք է բերել սույն օրենքով սահմանված մեկից ավելի տեսակի նպաստի իրավունք (ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է սույն օրենքով սահմանված տարբեր պատճառներով), ապա նրան նշանակվում և վճարվում է իր ընտրած մեկ տեսակի նպաստ:

~~6. Համատեղությամբ աշխատելու դեպքում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում, նշանակվում և վճարվում է յուրաքանչյուր գործատուի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից՝ անկախ մյուսների կողմից նպաստը նշանակվելու և վճարվելու հանգամանքից: Համատեղությամբ աշխատելու դեպքում (այդ թվում՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսացող վարձու աշխատողի դեպքում) մայրության նպաստը հաշվարկվում և վճարվում է գործատուներից մեկի (վարձու աշխատողի ընտրությամբ, որին ներկայացվել է ժամանակավոր անաշխատունակության թերթիկ) կողմից:~~

(4-րդ հոդվածը լրաց., փոփ. 20.06.13 ՀՕ-95-Ն, փոփ., լրաց., խմբ. 01.12.14 ՀՕ-206-Ն, խմբ., լրաց. 21.12.17 ՀՕ-290-Ն, խմբ., փոփ., լրաց. 25.06.19 ՀՕ-78-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-361-Ն)

(09.07.20 ՀՕ-361-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 5. Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի նպաստի իրավունքը

1. Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը սույն օրենքով սահմանված նպաստի իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացուն հավասար՝ օրենքով սահմանված կարգով եկամտային հարկ (շահութահարկ) վճարած լինելու դեպքում, եթե ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա դրությամբ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով:

(5-րդ հոդվածը փոփ. 20.06.13 ՀՕ-95-Ն, լրաց. 21.12.17 ՀՕ-290-Ն)

Հոդված 6. Նպաստների ֆինանսավորման աղբյուրները

1. Սույն օրենքով սահմանված նպաստների ֆինանսավորման աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցները.

2)~~ գործատուի միջոցները՝ սույն օրենքով սահմանված դեպքերում~~ ժամանակավոր ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա դրությամբ վարձու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող գործատուի (այսուհետ՝ վարձու աշխատողի գործատու) միջոցները՝ սույն օրենքով սահմանված դեպքերում, եթե գործատուն օրենքով սահմանված կարգով ազատված չէ հարկային գործակալի պարտականություններից:

~~2. Վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստը ժամանակավոր անաշխատունակության առաջին հինգ աշխատանքային օրերի համար վճարվում է գործատուի միջոցների հաշվին, որը չի փոխհատուցվում, իսկ նպաստի մնացած մասը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:~~

~~Սույն օրենքի իմաստով աշխատանքային են համարվում այն օրացուցային օրերը, որոնք չեն համարվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված ընդհանուր հանգստյան օրեր:~~

~~Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց ժամանակավոր անաշխատունակության նպաստները, ինչպես նաև սույն օրենքով սահմանված մայրության նպաստը վճարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին (բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված դեպքերի):~~

2. Վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստը վճարում է՝

1) ժամանակավոր անաշխատունակության առաջին յոթ օրացուցային օրերի համար՝ վարձու աշխատողի գործատուն (ով օրենքով սահմանված կարգով ազատված չէ հարկային գործակալի պարտականություններից) իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական

մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կատարած հաշվարկը, իսկ ժամանակավոր անաշխատունակության ութերորդ օրացուցային օրվանից՝ լիազոր մարմինը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին,

2) լիազոր մարմինը՝ պետական բյուջեի միջոցներ հաշվին, եթե վարձու աշխատողի գործատուն օրենքով սահմանված կարգով ազատված է հարկային գործակալի պարտականություններից:

~~՝~~4. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց ժամանակավոր անաշխատունակության նպաստները վճարում է լիազոր մարմինը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

5. Վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի մայրության նպաստը (բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 20-րդ մասով սահմանված դեպքերի) վճարում է լիազոր մարմինը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

3. ***(մասն ուժը կորցրել է 20.06.13 ՀՕ-95-Ն)***

Գ Լ ՈՒ Խ 3

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Հոդված 7. Վարձու աշխատողներին տրվող նպաստները

1. Վարձու աշխատողին տրվում են հետևյալ տեսակի նպաստները.
1) հիվանդության.
2) պրոթեզավորման.
3) առողջարանային բուժման.
4) մայրության.
5) ընտանիքի հիվանդ անդամի խնամքի:
(7-րդ հոդվածը փոփ. 01.12.14 ՀՕ-206-Ն)

Հոդված 8. Վարձու աշխատողին տրվող հիվանդության նպաստը

1. Վարձու աշխատողին հիվանդության նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի ~~աշխատանքային~~ օրացուցային օրերի համար՝ սկսած առաջին ~~աշխատանքային~~ օրացուցային օրվանից:

2. Տևական հիվանդության դեպքում վարձու աշխատողները անաշխատունակության թերթիկի ժամկետը երկարաձգելու նպատակով ֆունկցիոնալության գնահատման են ուղեգրվում անաշխատունակությունը սկսելու օրից 3 ամսից ոչ ուշ: Եթե անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի որոշման համաձայն վարձու աշխատողը շարունակում է դեռևս մնալ անաշխատունակ, ապա հիվանդության նպաստ ստանալու նրա իրավունքը կարող է շարունակվել, բայց ոչ ավելի, քան մինչև 3 ամիս ժամկետով կամ մինչև օրենքով սահմանված կարգով աշխատանքից ազատվելը:
(8-րդ հոդվածը փոփ. 27.05.21 ՀՕ-242-Ն, փոփ., լրաց. 04.05.22 ՀՕ-125-Ն)
(27.05.21 ՀՕ-242-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 9. Վարձու աշխատողներին տրվող պրոթեզավորման նպաստը

1. Վարձու աշխատողին պրոթեզավորման նպաստ տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակահատվածի ~~աշխատանքային~~ օրացուցային օրերի համար՝ սկսած առաջին ~~աշխատանքային~~ օրացուցային օրվանից:
(9-րդ հոդվածը փոփ. 27.05.21 ՀՕ-242-Ն)
(27.05.21 ՀՕ-242-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 10. Վարձու աշխատողին տրվող առողջարանային բուժման նպաստը

1. Առողջարանային բուժման նպաստը տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունից (ստացիոնարից) անմիջապես առողջարան բուժման ուղարկված վարձու աշխատողին, ինչպես նաև տուբերկուլյոզային առողջարան մեկնած վարձու աշխատողին՝ առողջարանում գտնվելու ամբողջ ժամանակահատվածի օրացուցային ~~աշխատանքային~~ օրերի համար՝ սկսած առաջին օրացուցային ~~աշխատանքային~~ օրվանից:

2. Առողջարանային բուժման նպաստի իրավունք տվող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(10-րդ հոդվածը փոփ. 27.05.21 ՀՕ-242-Ն)

(27.05.21 ՀՕ-242-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 11. Վարձու աշխատողին տրվող մայրության նպաստը

(վերնագիրը փոփ. 01.12.14 ՀՕ-206-Ն)

1. Վարձու աշխատողին մայրության նպաստ տրվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի բոլոր օրացուցային օրերի համար:

2. Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված վարձու աշխատողին մայրության նպաստ վճարվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի օրացուցային օրերի համար: Նպաստը վճարվում է որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը (երկու և ավելի նորածին որդեգրած կամ խնամակալ նշանակված անձին՝ մինչև 110 օրական դառնալը) ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:

3. Հղիության 154-րդ օրը և 154 օրից հետո վաղաժամ ծննդաբերելու և հղիության արձակուրդում չգտնվելու դեպքում մայրության նպաստը տրվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի օրացուցային օրերի համար (ներառյալ, երբ երեխան ծնվել է մահացած կամ մահացել է ծնվելուց հետո):

4. Մինչև հղիության 154-րդ օրը հղիության արհեստական (այդ թվում՝ բժշկական և սոցիալական ցուցումներով) կամ ինքնաբեր ընդհատման դեպքերում ժամանակավոր անաշխատունակության ամբողջ ժամանակահատվածի օրացուցային ~~աշխատանքային~~ օրերի համար տրվում է հիվանդության նպաստ՝ սույն օրենքով սահմանված կարգով:

5. Փոխնակ (սուրոգատ) մորը մայրության նպաստ վճարվում է ընդհանուր հիմունքներով: Փոխնակ (սուրոգատ) մորից ծնված երեխայի կենսաբանական մորը մայրության նպաստ վճարվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի օրացուցային օրերի համար՝ երեխայի ծնվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը (երկու և ավելի երեխա ծնվելու դեպքում՝ մինչև 110 օրական դառնալը) ժամանակահատվածի օրացուցային ~~աշխատանքային~~ օրերի համար:

(11-րդ հոդվածը լրաց. 12.12.13 ՀՕ-150-Ն, փոփ. 01.12.14 ՀՕ-206-Ն)

Հոդված 12. Վարձու աշխատողին տրվող ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստը

1. Վարձու աշխատողին ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ է տրվում՝

1) տնային (ամբուլատոր) պայմաններում ընտանիքի հիվանդ չափահաս անդամի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 7 օրացուցային օրից ոչ ավելի ժամանակահատվածի ~~աշխատանքային օրերի~~ համար՝ սկսած առաջին օրացուցային ~~աշխատանքային~~ օրվանից.

2) տնային (ամբուլատոր) պայմաններում հիվանդ երեխայի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 24 օրացուցային օրից ոչ ավելի, իսկ վարակիչ հիվանդությունների պատճառով երեխայի խնամքի անհրաժեշտության դեպքում՝ 28 օրացուցային օրից ոչ ավելի ժամանակահատվածի ~~աշխատանքային օրերի~~ համար՝ սկսած առաջին օրացուցային ~~աշխատանքային~~ օրվանից.

3) հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվող հիվանդ երեխայի խնամքն իրականացնելու դեպքում՝ հիվանդանոցում գտնվելու ամբողջ ժամանակահատվածի ~~աշխատանքային օրերի~~ համար՝ սկսած առաջին օրացուցային ~~աշխատանքային~~ օրվանից.

4) մինչև 18 տարեկան՝ անհատական խնամքի կարիք ունեցող կամ հաշմանդամություն ունեցող երեխայի առողջարանային բուժման ընթացքում նրա խնամքն իրականացնելու դեպքում՝ երեխայի առողջարանային բուժման ամբողջ ժամանակահատվածի ~~աշխատանքային օրերի~~ համար՝ սկսած առաջին օրացուցային ~~աշխատանքային~~ օրվանից, բայց ուղեգրում նշված ժամանակահատվածից ոչ ավելի: Ընդ որում, նպաստ է տրվում օրացուցային տարում մեկ անգամ:

2. Մինչև 3 տարեկան երեխայի կամ մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխայի խնամքի համար, եթե մայրը (խնամակալը, հոգաբարձուն) հիվանդության կամ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու պատճառով ի վիճակի չէ երեխայի խնամքն իրականացնել, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ տրվում է երեխայի խնամքն իրականացնող այլ վարձու աշխատողին, երեխայի մոր (խնամակալի, հոգաբարձուի) հիվանդության կամ նրա հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակահատվածի ~~աշխատանքային օրերի~~ համար՝ սկսած առաջին օրացուցային ~~աշխատանքային~~ օրվանից:

(12-րդ հոդվածը լրաց. 12.04.11 ՀՕ-123-Ն, փոփ. 27.05.21 ՀՕ-242-Ն, 04.05.22 ՀՕ-125-Ն)
(27.05.21 ՀՕ-242-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 13. Նպաստի տրամադրումը չվճարվող արձակուրդում կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող վարձու աշխատողներին

1. Չվճարվող արձակուրդում կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի տրվում:

Եթե անաշխատունակությունը շարունակվում է նաև չվճարվող արձակուրդի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդի ավարտից հետո, ապա ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է այն աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվանից, երբ աշխատողը պետք է անցներ աշխատանքի:

2. Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքում վարձու աշխատողներին մայրության նպաստը տրվում է ընդհանուր հիմունքներով՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի համար, բայց ոչ ավելի, քան մինչև աշխատողի աշխատանքի անցնելը:

(13-րդ հոդվածը փոփ., խմբ. 01.12.14 ՀՕ-206-Ն)

Հոդված 14. Նպաստի տրամադրումը աշխատանքից ազատման օրինականության մասին վեճի դեպքում

1. Աշխատանքից ազատման օրինականության մասին վեճի դեպքում վարձու աշխատողին ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության՝ գործատուի որոշման կամ դատարանի վճռի հիման վրա վարձու աշխատողին աշխատանքում վերականգնվելու օրվանից սկսած ժամանակահատվածի օրացուցային ~~աշխատանքային~~ օրերի համար՝ սկսած առաջին օրացուցային ~~աշխատանքային~~ օրվանից:

2. Աշխատանքից ազատման օրինականության մասին վեճի դեպքում վարձու աշխատողին մայրության նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության՝ գործատուի որոշման կամ դատարանի վճռի հիման վրա վարձու աշխատողին աշխատանքում վերականգնվելու օրվանից սկսած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:

(14-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.12.14 ՀՕ-206-Ն, փոփ. 27.05.21 ՀՕ-242-Ն)
(27.05.21 ՀՕ-242-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 15. Նպաստի տրամադրումը վարձու աշխատողին ամենամյա արձակուրդի ընթացքում առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում

1. Ամենամյա արձակուրդի ընթացքում ժամանակավոր անաշխատունակություն առաջանալիս վարձու աշխատողին նպաստը (բացառությամբ ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի) տրվում է ամենամյա արձակուրդի չօգտագործված (ամենամյա արձակուրդին և ժամանակավոր անաշխատունակությանը համընկնող) մասը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով օգտագործելու ժամանակահատվածի համար՝ ընդհանուր հիմունքներով:

(15-րդ հոդվածը փոփ. 20.06.13 ՀՕ-95-Ն, 01.12.14 ՀՕ-206-Ն)

~~**Հոդված 16. Նպաստի տրամադրումը գործատուի հետ որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքած վարձու աշխատողին**~~

~~1. *(մասն ուժը կորցրել է 01.12.14 ՀՕ-206-Ն)*~~

~~2. Որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով վարձու աշխատողին նպաստը հաշվարկվում և վճարվում է սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ ավելի, քան մինչև աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտը:~~

(16-րդ հոդվածը փոփ. 01.12.14 ՀՕ-206-Ն)

Գ Լ ՈՒ Խ 4

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆԱԲԱՐ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԱՊԱՀՈՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆՊԱՍՏՆԵՐԸ

Հոդված 17. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց տրվող նպաստները

1. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց տրվում են հետևյալ տեսակի նպաստները.
1) հիվանդության.
2) պրոթեզավորման.
3) մայրության.
4) ընտանիքի հիվանդ անդամի խնամքի:
(17-րդ հոդվածը փոփ. 01.12.14 ՀՕ-206-Ն)

Հոդված 18. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց տրվող հիվանդության նպաստը

1. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց հիվանդության նպաստ տրվում է միայն հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) բուժման ժամանակահատվածի համար, բայց մեկ օրացուցային տարվա ընթացքում 60 օրացուցային օրից ոչ ավելի:

Հոդված 19. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց տրվող պրոթեզավորման նպաստը

1. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց պրոթեզավորման նպաստ տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակահատվածի համար:

Հոդված 20. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց տրվող մայրության նպաստը
(վերնագիրը փոփ. 01.12.14 ՀՕ-206-Ն)

1. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց մայրության նպաստ տրվում է սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված ժամանակահատվածների համար:
(20-րդ հոդվածը փոփ. 01.12.14 ՀՕ-206-Ն)

Հոդված 21. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց տրվող ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստը

1. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստը տրվում է սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքերում՝ դրանցով նախատեսված ժամանակահատվածի համար:

Գ Լ ՈՒ Խ 5

ՆՊԱՍՏՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 22. Ժամանակավոր անաշխատունակության, մայրության նպաստը և միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկելու կարգը
(վերնագիրը խմբ. 12.04.11 ՀՕ-123-Ն, 01.12.14 ՀՕ-206-Ն)

1. Վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձից (եկամտից): Սույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասում նշված դեպքում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը հաշվարկվում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի և նվազագույն ամսական աշխատավարձի նկատմամբ հաշվարկված եկամտային հարկի հանրագումարի (այսուհետ՝ նվազագույն ամսական աշխատավարձ) հիսուն տոկոսից:
2. Վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձի (եկամտի) ութսուն տոկոսից:
3. Եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձից հաշվարկված տոկոսաչափը) գերազանցում է

ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի տասնապատիկը, ապա ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի տասնապատիկից:

4. Եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական եկամուտը կամ ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական եկամտից հաշվարկված տոկոսաչափը գերազանցում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հնգապատիկը, ապա ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի նպաստը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական

5. Եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ վարձու աշխատողին տրվող մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը գերազանցում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի տասնհինգապատիկը, ապա վարձու աշխատողի մայրության նպաստը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի տասնհինգապատիկից:

6. Եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ վարձու աշխատողի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը կամ եկամուտը պակաս է նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսից, ապա նպաստը հաշվարկվում է նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսից:

7. Վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող տասներկու հերթական օրացուցային ամիսների (այսուհետ՝ հաշվարկային ժամանակահատված) համար տվյալ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտը տասներկուսի բաժանելու միջոցով: Սույն մասի իմաստով եկամուտ են համարվում սույն օրենքով սահմանված նպաստը, ինչպես նաև եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները:

~~8. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում մայրության նպաստը նշանակելու (հաշվարկելու) համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված եկամտում հաշվի են առնվում նաև մնացած գործատուների կողմից հաշվարկային ժամանակահատվածի համար վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտը (իսկ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսացող վարձու աշխատողի դեպքում՝ նաև սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված եկամուտը), եթե վարձու աշխատողը ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ այդ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ է (կամ ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ հանդիսացել է ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ): Այլ գործատուի վճարած եկամտի մասին տեղեկատվությունը նպաստը հաշվարկող և նշանակող գործատուին է ներկայացնում վարձու աշխատողը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի տված տեղեկանքի հիման վրա: Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսացող վարձու աշխատողը սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված եկամտի մասին տեղեկատվությունը հիմնական (նպաստը հաշվարկող և նշանակող) գործատուին է ներկայացնում սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկանքի հիման վրա: Սույն մասով սահմանված դեպքում այլ գործատուի վճարած եկամուտը և սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված եկամուտը միջին ամսական աշխատավարձում հաշվառելու պայմաններն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~9. Հաշվարկային ժամանակահատվածի այն ամիսների համար, որոնց ընթացքում վարձու աշխատողը եղել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում (այսուհետ՝ խնամքի արձակուրդ), որպես եկամուտ հաշվառվում է խնամքի արձակուրդն սկսվելու ամսվան նախորդող ամսին աշխատանքային պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տվյալ վարձու աշխատողի համար սահմանված հիմնական աշխատավարձը:~~

~~10. Նպաստը հաշվարկելիս, եթե ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ վարձու աշխատողի՝ տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը պակաս է տասներկու ամսից, ապա վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս հաշվի է առնվում նաև հաշվարկային ժամանակահատվածում այլ գործատուի՝ մինչև տվյալ գործատուի մոտ աշխատանքի անցնելու ամիսը վճարված~~

~~եկամուտը, եթե վարձու աշխատողը ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ այդ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ չէ: Ընդ որում, հաշվարկային ժամանակահատվածի մեկ ամսվա համար կարող է հաշվառվել մեկ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված եկամուտը: Այլ գործատուի վճարած եկամտի մասին տեղեկատվությունը ներկայացնում է վարձու աշխատողը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի տված տեղեկանքի հիման վրա:~~

~~10.1. *(մասն ուժը կորցրել է, 24.11.22 ՀՕ-451-Ն)*~~

~~11. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի միջին ամսական եկամուտը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքի տարվան նախորդող տարվա՝ օրենքով սահմանված շահութահարկի հարկման բազա համարվող եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ պասիվ եկամուտների և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտների, տասներկուսի բաժանելու միջոցով: Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի կողմից ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու տարվան նախորդող տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի համակարգի շրջանակում շահութահարկ վճարած, սույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված ժամանակահատվածի յուրաքանչյուր ամսվա համար որպես շահութահարկի հարկման բազա համարվող եկամուտ ընդունվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսը:~~

~~12. Վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձից հաշվարկված տոկոսաչափը կամ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված չափը) բաժանվում է 25-ի և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի առաջին աշխատանքային օրվանից սկսած աշխատանքային օրերի թվով:~~

~~13. Հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (միջին ամսական աշխատավարձից հաշվարկված տոկոսաչափը կամ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված չափը) բաժանվում է 21-ի և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի առաջին աշխատանքային օրվանից սկսած աշխատանքային օրերի թվով:~~

~~14. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական եկամտից հաշվարկված տոկոսաչափը կամ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված չափը) բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության օրացուցային օրերի թվով:15. Մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձը կամ եկամուտը կամ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ սույն հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերով սահմանված համապատասխան չափը) բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) և բազմապատկվում հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի (ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին մայրության նպաստ նշանակելու դեպքում՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի) օրացուցային օրերի թվով:~~

~~16. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված չափը գերազանցող գումարից մայրության նպաստը նշանակելու (հաշվարկելու) և գործատուի միջոցներից վճարելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են գործատուների կնքած կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:~~

8. Վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի միջին ամսական աշխատավարձը հաշվարկելու համար հիմք են հանդիսանում ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա դրությամբ «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկատվական բազայում առկա տվյալները անձի՝ հաշվարկային ժամանակահատվածում սույն հոդվածի 7-րդ և 14-րդ մասերում նշված եկամուտների վերաբերյալ:

9. Ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա դրությամբ համատեղությամբ աշխատող կամ միաժամանակ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ հանդիսացող վարձու աշխատողի մայրության նպաստը նշանակելու (հաշվարկելու) համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված եկամտում հաշվի են առնվում (գումարվում են).

1) վարձու աշխատողի գործատուների կողմից հաշվարկային ժամանակահատվածի համար վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտները,

2) սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված եկամուտը:

10. Ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա դրությամբ համատեղությամբ աշխատող վարձու աշխատողի կամ միաժամանակ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ հանդիսացող վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստը նշանակելու (հաշվարկելու) համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով առանձին՝ ըստ վարձու աշխատողի յուրաքանչյուր գործատուի և որպես ինքնուրունաբար իրեն աշխատանքով ապահովված անձ:

11. Հաշվարկային ժամանակահատվածի այն ամիսների համար, որոնց ընթացքում վարձու աշխատողը եղել է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում (այսուհետ՝ խնամքի արձակուրդ), որպես եկամուտ հաշվառվում է խնամքի արձակուրդն սկսվելու ամսվան նախորդող ամսվա համար վարձու աշխատողի գործատուի վճարած (վճարման ենթակա) եկամուտը կամ լիազոր մարմնի կողմից վճարված մայրության նպաստը (եթե այդ ամսվա ընթացքում վարձու աշխատողը գտնվել է հղիության և ծննդաբերության արձակուրդում), իսկ այդ եկամտի կամ նպաստի բացակայության դեպքում՝ ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսը:

12. Վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգով հաշվարկելիս, եթե վարձու աշխատողի գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը պակաս է տասներկու ամսից, ապա հաշվի է առնվում նաև հաշվարկային ժամանակահատվածում այլ գործատուի (ում հետ վարձու աշխատողը ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա աշխատանքային հարաբերությունների մեջ չէ)՝ մինչև վարձու աշխատողի գործատուի մոտ աշխատանքի անցնելու ամիսը վարձու աշխատողին վճարված եկամուտը: Ընդ որում, հաշվարկային ժամանակահատվածի մեկ ամսվա համար կարող է հաշվառվել մեկ գործատուի (մեկից ավելի այլ գործատուի դեպքում՝ տվյալ ամսում առավելագույն եկամուտ վճարած գործատուի) կողմից վարձու աշխատողին վճարված եկամուտը:

13. Եթե ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա դրությամբ համատեղությամբ աշխատող վարձու աշխատողի բոլոր գործատուների մոտ աշխատելու ժամանակահատվածները պակաս են տասներկու ամսից, ապա հաշվարկային ժամանակահատվածում այլ գործատուի (ում հետ վարձու աշխատողը ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ աշխատանքային հարաբերությունների մեջ չէ)՝ վարձու աշխատողին վճարված եկամուտը վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձի հաշվարկում հաշվի է առնվում սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված կարգով: Այս դեպքում որպես սույն հոդվածի 12-րդ մասում նշված վարձու աշխատողի գործատու դիտարկվում է այն գործատուն, ում մոտ հաշվարկային ժամանակահատվածում աշխատանքի ընդունվելու օրը, ամիսը, տարին ամենավաղն է:

14. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի միջին ամսական եկամուտը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքի տարվան նախորդող տարվա՝ օրենքով սահմանված շահութահարկի հարկման բազա համարվող եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ պասիվ եկամուտների և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտների, տասներկուսի բաժանելու միջոցով: Ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու տարվան նախորդող տարվա՝

1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ շրջանառության հարկի համակարգի շրջանակում ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի կողմից շահութահարկ վճարած յուրաքանչյուր ամսվա համար որպես շահութահարկի հարկման բազա համարվող եկամուտ ընդունվում է նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսը,

2) սույն օրենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված ժամանակահատվածի համար եկամուտ չի հաշվարկվում:

15. Վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձից հաշվարկված տոկոսաչափը կամ սույն հոդվածի 3-րդ կամ 6-րդ մասերով սահմանված չափը) բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) և.

1) նպաստի՝ գործատուի միջոցներից վճարման ենթակա գումարը հաշվարկելու համար բազմապատկվում է ժամանակավոր անաշխատունակության օրացուցային այն օրերի թվով, որոնց համար սույն օրենքի համաձայն նպաստը վճարվում է գործատուի միջոցներից,

2) նպաստի՝ պետական բյուջեից վճարման ենթակա գումարը հաշվարկելու համար բազմապատկվում է ժամանակավոր անաշխատունակության օրացուցային այն օրերի թվով, որոնց համար սույն օրենքի համաձայն նպաստը վճարվում է պետական բյուջեի միջոցներից:

16. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական եկամտից հաշվարկված տոկոսաչափը կամ սույն հոդվածի 4-րդ կամ 6-րդ մասերով չափերը) բաժանվում

է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության օրացուցային օրերի թվով:

17. Ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա դրությամբ համատեղությամբ աշխատող վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստը նշանակվում է առանձին՝ ըստ վարձու աշխատողի յուրաքանչյուր գործատուի և յուրաքանչյուր գործատուի մասով հաշվարկվում է սույն հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով: Այս դեպքում վարձու աշխատողի յուրաքանչյուր գործատուի մասով հաշվարկված՝ պետական բյուջեից վճարման ենթակա ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները վճարվում են դրանց հանրագումարի չափով:

18. Միաժամանակ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ հանդիսացող վարձու աշխատողի (այդ թվում՝ համատեղությամբ աշխատող) ժամանակավոր անաշխատունակության նպաստը նշանակվում է առանձին՝ որպես ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձ և վարձու աշխատող՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելով սույն հոդվածի 15 17-րդ մասերով սահմանված կարգով: Այս դեպքում վարձու աշխատողի յուրաքանչյուր գործատուի մասով հաշվարկված՝ պետական բյուջեից վճարման ենթակա ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները և ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի համար հաշվարկված ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը վճարվում են դրանց հանրագումարի չափով:

19. Մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (այդ թվում՝ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ սույն հոդվածի 4-6-րդ մասերով սահմանված համապատասխան չափը) բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) և բազմապատկվում հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի (ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին մայրության նպաստ նշանակելու դեպքում՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի) օրացուցային օրերի թվով:

20. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված չափը գերազանցող գումարից վարձու աշխատողի գործատուն կարող է վճարել մայրության նպաստը իր միջոցների հաշվին: Սույն մասով սահմանված դեպքում մայրության նպաստ նշանակելու (հաշվարկելու) և գործատուի միջոցներից վճարելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են գործատուների կնքած կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

Հոդված 23. Քրեակատարողական հիմնարկում գտնվող ազատազրկված դատապարտյալին տրվող նպաստի հաշվարկումը և վճարումը

1. Քրեակատարողական հիմնարկում գտնվող ազատազրկված դատապարտյալին նպաստի հաշվարկման և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գ Լ ՈՒ Խ 6

ՆՊԱՍՏԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

Հոդված 24. Նպաստը նշանակելը և վճարելը

~~1. Վարձու աշխատողի նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է գործատուն՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետում:~~

~~Նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները գործատուն վճարում է տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի հաշվին:~~

~~Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկը բավարար չէ նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վճարելու համար, ապա գործատուն նպաստի պակասող մասը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցում է լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գործատուի կողմից հարկային մարմին ներկայացրած տեղեկանքի հիման վրա հարկային մարմնի հաստատած տեղեկանքը լիազոր մարմին ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:~~

~~Եթե գործատուն օրենքով սահմանված կարգով ազատված է հարկային գործակալի պարտավորությունից, ապա նպաստի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից վճարման ենթակա գումարները վարձու աշխատողին նշանակում և վճարում է լիազոր մարմինը:~~

~~2. Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է լիազոր մարմինը:~~

~~3. Լիազոր մարմինը նպաստը վճարում է անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:~~

~~4. Գործատուի վերակազմակերպման դեպքում վարձու աշխատողներին նպաստ նշանակում և վճարում է նրա իրավահաջորդը, իսկ լուծարման (ֆիզիկական անձ գործատուի մահվան) դեպքում՝ լիազոր մարմինը:~~

~~4.1. Հողության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածում գործատուի փոփոխության (բացառությամբ վերակազմակերպման) դեպքում վարձու աշխատողին մայրության նպաստը վճարում է լիազոր մարմինը՝ Կառավարության սահմանած կարգով:~~

~~5. Նպաստ չի տրվում՝~~

~~1) այն անձանց, որոնց ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է նրանց կողմից հանցագործություն կամ այլ հակաիրավական արարք կատարելիս ստացված վնասվածքների հետևանքով.~~

~~2) *(կետն ուժը կորցրել է 04.05.22 ՀՕ-125-Ն)*~~

~~3) բժշկի սահմանած բուժման ռեժիմն առանց հարգելի պատճառի խախտած օրերի համար:~~

~~6. Նպաստը նշանակվում է, եթե դրա համար պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են աշխատունակության վերականգնման, հղիության և ծննդաբերության արձակուրդի (ժամանակահատվածի) ավարտման օրվան հաջորդող ամսվանից սկսած վեցամսյա ժամկետում:~~

~~7. Նպաստի հաշվարկման, նշանակման և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

~~*(24-րդ հոդվածը փոփ., խմբ. 20.06.13 ՀՕ-95-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-361-Ն, լրաց. 27.05.21 ՀՕ-242-Ն, փոփ. 04.05.22 ՀՕ-125-Ն)*~~

~~*(09.07.20 ՀՕ-361-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*~~

~~*(27.05.21 ՀՕ-242-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*~~

1. Բացառությամբ սույն հոդվածի 18-րդ մասում նշված դեպքի, նպաստը նշանակում և հաշվարկում է լիազոր մարմինը՝ հիմք ընդունելով հետևյալ տեղեկատվությունը (տվյալները)՝

1) էլեկտրոնային առողջապահության համակարգում առկա՝ վարձու աշխատողի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու վերաբերյալ,

2) «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկատվական բազայում առկա՝ անձի՝ վարձու աշխատող, անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսանալու, հաշվարկային ժամանակահատվածում վճարված (վճարվելիք) աշխատավարձի (եկամտի) կամ ստացված եկամուտների վերաբերյալ,

3) լիազոր մարմնի կողմից վարվող տեղեկատվական համակարգում առկա՝ անձին վճարված նպաստի վերաբերյալ,

4) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալները,

5) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալները,

6) Կառավարության սահմանած դեպքերում՝ նաև քաղաքացու դիմումը:

2. Նպաստ նշանակելու, հաշվարկելու և վճարելու (այդ թվում՝ վարձու աշխատողի գործատուի կողմից) համար անհրաժեշտ տեղեկատվությունը (տվյալները) լիազոր մարմնի կողմից վարվող տեղեկատվական համակարգի, էլեկտրոնային առողջապահության համակարգի և հարկային մարմնի կողմից վարվող տեղեկատվական բազայի միջև փոխանակելու կարգը, տեղեկատվության (տվյալների) կազմը սահմանում է Կառավարությունը:

3. Վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության առաջին օրվա (ժամանակավոր անաշխատունակության թերթիկը բացելու) և ժամանակավոր անաշխատունակության վերջին օրվա (ժամանակավոր անաշխատունակության թերթիկը փակելու) վերաբերյալ տեղեկատվությունը էլեկտրոնային առողջապահության համակարգից լիազոր մարմնին տրամադրվում է համապատասխան հանգամանքն առաջանալուց (ժամանակավոր

անաշխատունակության թերթիկը բացելուց կամ փակելուց) հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում: էլեկտրոնային առողջապահության համակարգից ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինն այդ տեղեկատվությունը հարկային մարմնի միջոցով ուղարկում է վարձու աշխատողի գործատուին: Ընդ որում՝ ժամանակավոր անաշխատունակության թերթիկի բացման և փակման վերաբերյալ գրառումը էլեկտրոնային առողջապահության համակարգ կատարվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկի, համապատասխանաբար, բացման և փակման օրվա ընթացքում, բացառությամբ օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված՝ անձի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը հաստատող փաստաթղթի հիման վրա, ինչպես նաև ոչ աշխատանքային օրվա ընթացքում կամ Կառավարության սահմանած դեպքերում գրանցված և էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրվող տեղեկատվության, որը էլեկտրոնային առողջապահության համակարգ է մուտքագրվում ստացման օրը:

4. ժամանակավոր անաշխատունակության վերջին օրվա (ժամանակավոր անաշխատունակության թերթիկը փակելու) վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմնից ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը նախորդ օրվա դրությամբ առկա՝ նպաստը հաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրում է լիազոր մարմնին:

5. Վարձու աշխատողի նպաստը հաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը հարկային մարմնից ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկում է նպաստը, իսկ ժամանակավոր անաշխատունակության նպաստի դեպքում՝ նաև վարձու աշխատողի գործատուի կողմից վճարման ենթակա գումարի չափը և գործատուին փոխանցելու համար հարկային մարմնին տեղեկացնում է՝

1) վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի վերաբերյալ, որի համար հաշվարկվել է նպաստը,

2) գործատուի կողմից վճարման ենթակա՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարի վերաբերյալ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինն այն տրամադրում է գործատուին:

7. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի նպաստը հաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը հարկային մարմնից ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկում է նպաստը և հարկային մարմնի միջոցով ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին տեղեկացնում է նպաստի գումարի, դրա հաշվարկման, հաշվարկման հիմքում ընկած՝ եկամուտների և ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի վերաբերյալ:

8. Մայրության նպաստը, ժամանակավոր անաշխատունակության նպաստի՝ պետական բյուջեից վճարման ենթակա գումարը լիազոր մարմինը վճարում է առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետից ոչ ուշ, անկանխիկ եղանակով՝ վարձու աշխատողի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի կողմից ընտրված բանկի միջոցով՝ Կառավարության սահմանած կարգով:

9. ժամանակավոր անաշխատունակության նպաստի՝ վարձու աշխատողի գործատուի կողմից վճարման ենթակա գումարը գործատուն վճարում է հարկային մարմնի միջոցով ստացված տեղեկատվության հիման վրա՝

նպաստի հաշվարկման և նշանակման ամսվա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետում ;

10.Գործատուի վերակազմակերպման դեպքում վարձու աշխատողի գործատուի կողմից ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարման ենթակա գումարը վճարում է վերակազմակերպված գործատուի իրավահաջորդը, իսկ լուծարման (ֆիզիկական անձ գործատուի մահվան) դեպքում՝ լիազոր մարմինը:

11. Այն դեպքում, երբ վարձու աշխատողի գործատուն օրենքով սահմանված կարգով ազատված է հարկային գործակալի պարտականություններից, լիազոր մարմինը ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է սույն օրենքով սահմանված կարգով՝ առանց սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով վարձու աշխատողի գործատուին տեղեկատվություն (տվյալներ) տրամադրելու:

12.Նպաստ չի տրվում՝

1) այն անձանց, որոնց ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է նրանց կողմից հանցագործություն կամ այլ հակահիրավական արարք կատարելիս ստացված վնասվածքների հետևանքով.

2) բժշկի սահմանած բուժման ռեժիմը խախտած օրերի համար.

3) այն անձանց, ում տվյալները չեն նույնականացվում Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում:

13.Օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված՝ անձի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածը հաստատող փաստաթղթի հիման վրա նպաստը նշանակվում է էլեկտրոնային առողջապահության համակարգից ստացված տեղեկատվության (տվյալների) հիման վրա, եթե այդ տվյալները ստացվել են աշխատունակության վերականգնման, հղիության և ծննդաբերության արձակուրդի (ժամանակահատվածի) ավարտման ամսվան հաջորդող վեցերորդ ամսվանից ոչ ուշ և ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի համար աշխատավարձ չի վճարվել:

14.Օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված՝ անձի ժամանակավոր անաշխատունակ լինելը հաստատող փաստաթղթի հիման վրա անձի ժամանակավոր անաշխատունակության վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) էլեկտրոնային առողջապահության համակարգ է ներառվում առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի տված թույլտվության հիման վրա՝ Կառավարության սահմանած կարգով:

15.Էլեկտրոնային առողջապահական համակարգում առկա տվյալներով անձի ժամանակավոր անաշխատունակության (այդ թվում՝ հղիության և ծննդաբերության պատճառով առաջացած)՝ սույն օրենքով սահմանված ժամանակահատվածի համար վարձու աշխատողին վճարվում է նպաստ, իսկ աշխատավարձ չի հաշվարկվում և չի վճարվում:

16.Նպաստ նշանակելու և վճարելու կամ նպաստ նշանակելը մերժելու մասին լիազոր մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է այն անձին, ում վճարվել է նպաստը (ում վճարելու համար նպաստի գումարը փոխանցվել է բանկ) կամ ում մերժել է նպաստ նշանակելը՝ նշելով մերժման հիմքերը:

17.Նպաստի հաշվարկման, նշանակման և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

18. Վարձու աշխատողին, ում վերաբերող տեղեկատվությունն անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ համարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է Կառավարության սահմանած մարմինը՝ Կառավարության սահմանած կարգով:

~~Հոդված 25. Նպաստի նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերը~~

~~1. Նպաստի նշանակման համար հիմք է համարվում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը, որի ձևը, լրացման ու տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձին նպաստ նշանակելու համար նաև հարկային մարմնի տված՝ սույն օրենքի 22 րդ հոդվածի 11 րդ մասով սահմանված եկամուտների մասին տեղեկանքը:~~

~~Հարկային մարմինը սույն մասով սահմանված տեղեկանքը տրամադրում է անձի՝ տեղեկանքի համար դիմելու օրվա դրությամբ հարկային պարտավորությունները կատարելուց հետո:~~

~~2. Մինչև 18 տարեկան անհատական խնամքի կարիք ունեցող երեխային կամ հաշմանդամություն ունեցող երեխային առողջարանում խնամելու դեպքում ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի նշանակման և վճարման համար, բացի ժամանակավոր անաշխատունակության թերթիկից, ներկայացվում է նաև առողջարանային բուժման ուղեգրի՝ առողջարանի կողմից վավերացված լուսապատճենը:~~

~~3. Համատեղությամբ աշխատելու դեպքում վարձու աշխատողին ժամանակավոր անաշխատունակության նպաստ նշանակելու համար նպաստը հաշվարկող և նշանակող գործատուի համար հիմք է համարվում ժամանակավոր անաշխատունակության թերթիկը, իսկ մյուս գործատուի (գործատուների) և լիազոր մարմնի համար՝ նպաստը հաշվարկող և նշանակող գործատուի կողմից վավերացված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի լուսապատճենը:~~

~~4. Օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկը հիմք է համարվում նպաստի նշանակման համար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:~~

~~5. Օրենքի 24 րդ հոդվածի 1 ին մասի չորրորդ պարբերությամբ նշված վարձու աշխատողը, բացի ժամանակավոր անաշխատունակության թերթիկից, ներկայացնում է աշխատանքային պայմանագիրը (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտը), ինչպես նաև գործատուի տված տեղեկանքը, որտեղ նշվում են՝~~

~~1) վարձու աշխատողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները.~~

~~2) տվյալ կազմակերպությունում աշխատելու ժամանակահատվածը.~~

~~3) հաշվարկային ժամանակահատվածում վարձու աշխատողին վճարված եկամուտը՝ ըստ ամիսների.~~

~~4) առաջին հինգ աշխատանքային օրերի համար գործատուի միջոցների հաշվին վճարված (հաշվարկված) ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը.~~

~~5) վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության մեջ լինելու (աշխատանքի չներկայանալու) ժամանակահատվածը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ տվյալներ:~~

~~***(25 րդ հոդվածը փոփ., լրաց. 12.04.11 ՀՕ-123-Ն, 20.06.13 ՀՕ-95-Ն, փոփ. 01.12.14 ՀՕ-206-Ն, լրաց., փոփ. 09.07.20 ՀՕ-361-Ն, փոփ. 27.05.21 ՀՕ-242-Ն, 04.05.22 ՀՕ-125-Ն)***~~

~~***(09.07.20 ՀՕ-361-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***~~

~~***(27.05.21 ՀՕ-242-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***~~

Հոդված 26. Նպաստի նշանակումը, հաշվարկումը և վճարումը անձի մահվան դեպքում

~~Նպաստ ստացողի մահվան պատճառով չստացված նպաստը վճարելը~~

~~1. Աշխատողին հասանելիք և նրա մահվան պատճառով չստացված նպաստի գումարը վճարվում է մահացողի ընտանիքի անդամին՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը աշխատողի մահվանից հետո վեցամսյա ժամկետում ներկայացնելու դեպքում:~~

~~2. Չստացված նպաստը վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանք ներկայացնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:~~

1. Անաշխատունակության ժամանակահատվածի առաջին օրվա վերաբերյալ տեղեկատվություն ստանալուց հետո՝ մինչև նպաստ նշանակելը վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի մահվան դեպքում նպաստը նշանակվում, հաշվարկվում և վճարվում է մահացողի ընտանիքի անդամին (ամուսնուն, ծնողին, զավակին, 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներով աշխատողի մահվան օրվա դրությամբ նրա հետ նույն վայրում (հասցեում) համատեղ հաշվառված անձին)՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվան օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում լիազոր մարմին ներկայացնելու դեպքում: Վեցամսյա ժամկետը լրանալուց հետո չվճարված նպաստի գումարը վճարվում է ժառանգության վկայագրի հիման վրա:

2. Անաշխատունակության ժամանակահատվածի առաջին օրվա վերաբերյալ տեղեկատվություն ստանալուց հետո՝ մինչև նպաստ նշանակելը վարձու աշխատողի մահանալու կամ նպաստը նշանակելուց հետո մահվան պատճառով նպաստը չվճարելու դեպքերում նպաստի՝

1) պետական բյուջեից վճարման ենթակա գումարը վճարվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ դիմում ներկայացրած անձի կողմից ընտրված բանկի միջոցով՝ Կառավարության սահմանած կարգով,

2) գործատուի կողմից վճարման ենթակա գումարը վճարվում է աշխատողի մահվան դեպքում աշխատավարձի վճարման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:

3. Վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի մահվան դեպքում նպաստն այլ անձի նշանակելու և վճարելու կարգը, նպաստ նշանակելու դիմումում ներառվող տվյալների կազմն ու բովանդակությունը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

~~Հոդված 27.~~ Պակաս վճարված նպաստի վճարումը, ավել վճարված նպաստի գումարի հետպահումը, նպաստի վերահաշվարկը

~~1. Սխալ հաշվարկելու հետևանքով պակաս վճարված նպաստի գումարի վճարումը կատարվում է առանց ժամկետի սահմանափակման: Ընդ որում, վարձու աշխատողներին պակաս վճարված նպաստի գումարը գործատուն վճարում է իր միջոցներից՝ սխալը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:~~

~~1.1. Վարձու աշխատողի մայրության նպաստը վերահաշվարկվում է նաև սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում իր եկամտի վերաբերյալ վարձու աշխատողի կողմից գործատուին (նպաստը հաշվարկող և վճարող) լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու դեպքում: Այս դեպքում մայրության նպաստը վճարվում է սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով:~~

~~2. Ավել վճարված նպաստի գումարի հետպահումները կատարվում են գործատուի կամ լիազոր մարմնի որոշմամբ, եթե նպաստը նշանակվել և վճարվել է հաշվարկային մեխանիկական սխալների կամ նպաստը ստացողի կողմից սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու հետևանքով:~~

~~Ավել վճարված գումարը հետ է պահվում ամբողջությամբ: Հետպահումը կատարվում է նպաստի հաջորդ վճարումներից կամ աշխատավարձից, ընդ որում, հետպահվող գումարի չափը յուրաքանչյուր անգամ չի կարող գերազանցել վճարվող նպաստի կամ աշխատավարձի 20 տոկոսը:~~

~~3. Եթե նպաստը նշանակվել և վճարվել է հաշվարկային մեխանիկական սխալով, ապա ավել վճարված նպաստի գումարի հետպահումները կարող են կատարվել, եթե նպաստի նշանակման օրվանից չի անցել 3 ամսից ավել, իսկ սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու հետևանքով ավել վճարված նպաստի գումարի հետպահումները կատարվում են առանց ժամկետի սահմանափակման:~~

~~4. Եթե նպաստ ստացող անձն ազատվել է աշխատանքից կամ օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցրել է իր գործունեությունը, ապա ավել վճարված նպաստի գումարը բռնագանձվում է դատական կարգով՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներում:~~

~~5. Վարձու աշխատողի հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու, իսկ համատեղությամբ աշխատելու դեպքում գործատուներից մեկի մոտ ընդհատվելու կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի գործունեությունը վերսկսելու դեպքում վճարված մայրության նպաստը վերահաշվարկվում է, և ավել վճարված մայրության նպաստի գումարի հետպահումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ վարձու աշխատողի մայրության նպաստը հաշվարկվել է սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մեծությունից:~~

~~6. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի՝ սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկանքով ներկայացված եկամուտը ստուգման արդյունքում կամ ճշտված հաշվետվության հիման վրա փոփոխվելու դեպքում ավել վճարված նպաստի գումարի հետպահումը կատարում է հարկային մարմինը, իսկ պակաս վճարած նպաստի գումարը վճարում է լիազոր մարմինը:~~

~~Ավել վճարված նպաստի գումարի հետպահումը կատարվում է, և պակաս վճարած նպաստի գումարը վճարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:~~

~~(27-րդ հոդվածը փոփ., լրաց. 12.04.11 ՀՕ-123-Ն, խմբ. 01.12.14 ՀՕ-206-Ն, լրաց. 09.07.20 ՀՕ-361-Ն)~~

~~(09.07.20 ՀՕ-361-Ն օրենքն ունի անցումային դրույթ)~~

1. Սույն օրենքի 28-րդ հոդվածով սահմանված պետական մարմինների մեղքով (գործողությունների կամ անգործության արդյունքում) կամ էլեկտրոնային առողջապահության համակարգում առկա տվյալների հիման վրա չվճարված (չհաշվարկված կամ չնշանակված) կամ պակաս վճարված նպաստի գումարը վճարվում է առանց ժամկետի սահմանափակման:

2. Եթե սույն օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասում նշված տեղեկատվությունը տրամադրելու ամսվանից հետո՝ 36 ամսվա ընթացքում վարձու աշխատողի գործատուի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի կամ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի կողմից հարկային մարմին է ներկայացվում գրանցման հայտ կամ հաշվարկ (այդ թվում՝ ճշտված) կամ հարկային հսկողության իրականացման արդյունքում հայտնաբերվում է նպաստը հաշվարկելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության (տվյալի) փոփոխություն, հարկային մարմինն այդ մասին Կառավարության սահմանած կարգով տեղեկացնում է լիազոր մարմնին՝ համապատասխան հանգամանքն ի հայտ գալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված՝ հարկային մարմնից ստացված տեղեկատվության (տվյալի) հիման վրա լիազոր մարմինը վերահաշվարկում է նպաստի չափը՝ նպաստը հաշվարկելու համար սույն օրենքով սահմանված կարգով և ըստ անհրաժեշտության (եթե փոխվել է գործատուի տրամադրած տեղեկատվությունը (տվյալը)) սույն օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկատվությունը հարկային մարմնի միջոցով տրամադրում է գործատուին:

4. Եթե սույն հոդվածի 2-րդ մասում նշված՝ վարձու աշխատողին վերաբերող տեղեկատվությունը (տվյալը) ստացվել է նպաստը վճարելու օրվանից հետո՝ 3 ամսվա ընթացում և վերահաշվարկի արդյունքում նպաստի չափը՝

1) ավելանում է, ապա նպաստի պակաս վճարված գումարը վճարվում է սույն օրենքով սահմանված կարգով,

2) պակասում է, ապա ավել վճարված գումարի՝ պետական բյուջեից վճարված չափը վարձու աշխատողը պետական բյուջե է վերականգնում լիազոր մարմնի հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա՝ ոչ ավել, քան ժամանակացույցը կնքելու ամսվանից հետո՝ 3 ամսվա ընթացքում, իսկ գործատուի կողմից ավել վճարված գումարը աշխատավարձից պահվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:

5. Եթե սույն հոդվածի 2-րդ մասում նշված՝ վարձու աշխատողին վերաբերող տեղեկատվությունը (տվյալը) ստացվել է նպաստը վճարելու օրվանից 3 ամիս հետո և վերահաշվարկի արդյունքում նպաստի չափը՝

1) ավելանում է, ապա պակաս վճարված նպաստի ամբողջ գումարը վարձու աշխատողի գործատուն վարձու աշխատողին վճարում է իր միջոցներից՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկատվությունը հարկային մարմնի միջոցով ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, եթե վարձու աշխատողին վերաբերող տեղեկատվությունը (տվյալը) ստացվել է նպաստը հաշվարկող գործատուի կողմից: Եթե սույն հոդվածի 2-րդ մասում նշված՝ վարձու աշխատողին վերաբերող տեղեկատվությունը (տվյալը) ստացվել է այլ գործատուի կողմից, ապա պակաս վճարված նպաստի ամբողջ գումարը վարձու աշխատողին վճարվում է սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով:

2) պակասում է, ապա ավել վճարված գումարի՝ պետական բյուջեից վճարված չափը Կառավարության սահմանած կարգով, այդ թվում՝ լիազոր մարմնի հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա պետական բյուջե վերականգնում է վարձու աշխատողի գործատուն՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկատվությունը հարկային մարմնի միջոցով ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, իսկ նրա կողմից ավել վճարված չափը վերականգնման ենթակա չէ: Գործատուի գրավոր դիմումի (համաձայնության) հիման վրա ժամանակացույց կազմելու կարգը սահմանում է լիազոր մարմինը:

6. Եթե սույն հոդվածի 2-րդ մասում նշված՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի կամ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի վերաբերյալ տեղեկատվության (տվյալի) հիման վրա լիազոր մարմնի կատարած վերահաշվարկի արդյունքում նպաստի չափը՝

1) ավելանում է, ապա պակաս վճարված նպաստի ամբողջ գումարը վճարվում է սույն օրենքով սահմանված կարգով,

2) պակասում է, ապա ավել վճարված գումարը ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձը կամ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողը պետական բյուջե է

վերականգնում լիազոր մարմնի հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա՝ ոչ ավել, քան ժամանակացույցը կնքելու ամսվանից հետո՝ 3 ամսվա ընթացքում:

7. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված 36 ամսյա ժամկետից հետո վարձու աշխատողի գործատուի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի կամ հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողի կողմից հարկային մարմին ներկայացված գրանցման հայտի կամ ճշտված հաշվարկի կամ հարկային հսկողության իրականացման արդյունքում հայտնաբերված՝ նպաստը հաշվարկելու համար հիմք հանդիսացող տեղեկատվության (տվյալի) փոփոխության դեպքում նպաստը չի վերահաշվարկվում:

8. Սույն հոդվածի 4-րդ և 6-րդ մասերի 2-րդ կետերում նշված ժամանակացույցը կազմելու կարգը սահմանում է լիազոր մարմինը:

9. Եթե հաշվարկային ժամանակահատվածում կամ այդ ժամանակահատվածի առանձին ամիսներին գործատուի (սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ գործատուի) մոտ առկա՝ վարձու աշխատողին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, ապա նպաստը վերահաշվարկվում է Կառավարության սահմանած կարգով՝ քաղաքացու դիմումի հիման վրա:

10. Սույն հոդվածով սահմանված կարգով պետական բյուջե չվերականգնված՝ ավել վճարված նպաստի գումարները պետական բյուջե են բռնագանձվում դատական կարգով՝ լիազոր մարմնի ներկայացրած հայցի հիման վրա:

11. Սույն հոդվածով սահմանված դեպքերում և կարգով մայրության նպաստը վերահաշվարկվում է, եթե մայրության նպաստը չի հաշվարկվել սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մեծությունից:

12. Վերահաշվարկման արդյունքում մայրության նպաստի չափը չի կարող պակաս լինել ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսից 140 օրվա (վաղաժամ ծննդաբերության դեպքում՝ 70 օրվա) համար հաշվարկված մայրության նպաստի չափից:

Գ Լ ՈՒ Խ 7

ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՍՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 28. Լիազորված պետական մարմինների իրավասությունները

~~1. Հարկային մարմինը՝~~

~~1) եկամտային հարկի ճշտությանն ուղղված դեպքերում օրենքով սահմանված կարգով իրականացվող ստուգումների ժամանակ հսկողություն է իրականացնում գործատուների կողմից վարձու աշխատողներին նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման ճշտության նկատմամբ, այդ թվում՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մայրության նպաստի հաշվարկման, նշանակման և վճարման ճշտության նկատմամբ.~~

~~2) սույն օրենքով սահմանված դեպքերում իրականացնում է ավել վճարված նպաստի գումարի հետպահումը՝ այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տեղեկատվություն տրամադրելով լիազոր մարմնին:~~

~~2. Լիազոր մարմինը՝~~

~~1) սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկում, նշանակում և վճարում է ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց նպաստները, վարձու աշխատողին է տրամադրում սույն օրենքի 22-րդ հոդվածի 8-րդ և 10-րդ մասերով սահմանված տեղեկանքը.~~

~~2) *(կետն ուժը կորցրել է 20.06.13 ՀՕ-95-Ն)*~~

~~3) իր լիազորությունների շրջանակում գործատուներից, կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից պահանջում է նպաստ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, օրենսդրությամբ սահմանված կարգով քննարկում է նպաստներին վերաբերող բողոքները.~~

~~4) օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառում է ժամանակավոր անաշխատունակության նպաստներին վերաբերող տվյալները.~~

~~5) իրականացնում է իր լիազորություններից բխող այլ գործառույթներ:~~

~~3. Առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնին է տրամադրում անձնավորված տեղեկատվություն հղիության~~

~~և ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրամադրված անաշխատունակության թերթիկների մասին:~~

~~*(28-րդ հոդվածը խմբ., լրաց. 12.04.11 ՀՕ-123-Ն, փոփ. 20.06.13 ՀՕ-95-Ն, 01.12.14 ՀՕ-206-Ն)*~~

1. Լիազոր մարմինը՝

1) սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկում, նշանակում է վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձանց նպաստները, այդ թվում՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի՝ պետական բյուջեի և վարձու աշխատողի գործատուի կողմից վճարման ենթակա չափը՝ իր կողմից վարվող տեղեկատվական շտեմարանի միջոցով: Շտեմարան ներառվող տվյալների կազմը սահմանում է Կառավարությունը.

2) սույն օրենքով սահմանված կարգով վճարում է վարձու աշխատողի և ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահովված անձի նպաստի՝ պետական բյուջեից վճարման ենթակա գումարները.

3) իր լիազորությունների շրջանակում օրենսդրությամբ սահմանված կարգով բննարկում է նպաստներին վերաբերող բողոքները.

4) օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառում է նպաստներին վերաբերող տվյալները.

5) իրականացնում է օրենքով սահմանված այլ գործառույթներ:

2. Հարկային մարմինը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում հսկողություն է իրականացնում գործատուների կողմից վարձու աշխատողներին նպաստների վճարման ճշտության նկատմամբ.

2) ապահովում է նպաստների հաշվարկման և վճարման համար անհրաժեշտ տեղեկատվության հաշվառումը իր կողմից վարվող տեղեկատվական բազայում:

3. Առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը ապահովում է նպաստների նշանակման և վճարման համար անհրաժեշտ տեղեկատվության հաշվառումը էլեկտրոնային առողջապահության համակարգում:

4. Լիազոր մարմինը, հարկային մարմինը, առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով ապահովում են նպաստի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվության (տվյալների) տրամադրումը, ստացումը և փոխանցումը:

Հոդված 29. Նպաստներին վերաբերող որոշումների բողոքարկումը

1. Լիազոր մարմնի՝ նպաստներին վերաբերող որոշումները կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:

2. Գործատուի՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարմանը ~~նպաստներին~~ վերաբերող որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

Հոդված 30. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

1. Սույն օրենքը խախտող պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով: